

## **Քաղաքական նոր Սուբյեկտները Հայաստանում և Մարտիմեկյան իրադարձությունները**

Քաղաքական և սոցիալական ընթացքները ժամանակակից Հայաստանում ընդհանրություններ ունեն երրորդ աշխարհում ընթացող պրոցեսներին: Սակայն նմանությունների հետ կան նաև տարբերություններ: Խորհրդային արդյունաբերականացումը Հայաստանում ուղեկցվեց դեմոգրաֆիական, տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոնացումով: Մայրաքաղաքում կենտրոնացավ հանրապետության բնակչության 30 տոկոսից ավելին: Սակայն հետխորհրդային ապարդյունաբերականացումը էլ ավելի ուժեղացրեց կենտրոնացման միտումները: Սոցիալական անարդարության խորացման հետ աճեց նաև ներհանրապետական ռեզիոնալ անհամաչափությունները:

Երևանը ուշխորհրդային տարիներին երկբևեռ քաղաք էր, փաստորեն բաղկացած էր urban village-ից և ինդուստրիալ ծայրամասից: Կենտրոնը դեռևս պահպանում էր դեռևս 20-ականներիին արված Ա. Թամանյանի նախագիծը՝ ընդհանուր սկզբունքը՝ այգի-քաղաք աշխատավորներ համար, լայն փողոցներով, ցածր հարկայնությամբ և հարմարավետ այգիներով, ուր քաղաքաստեղծ հիմնական միավորը օբակնօ էր, յուրօրինակ լոկալ համայնքը: Ընդհակառակը. ծայրամասերը, ուր տեղադրված էին նաև արդյունաբերական ձեռնարկությունները, իրենից ներկայացնում էին ստանդարտ անհրապույր շինություններով կառուցապատված «քարե ջունգլիներ»: Չուր չէ, որ այդ թաղամասերից մեկը՝ «Հարավ-Արևմտյանը» ստացավ ստացավ հասարակության կողմից «Բանգլադեշ» մականունը:

Մի տարբերություն, որ կարելի է մեկնաբանել որպես քաղաքական՝ «ազգայինի» և «խորհրդայինի» տարբերություն: Բայց դա սովորական գաղութային՝ տնտեսական և ռասայական տարբերություն չէր:

Խորհրդային Միությունում չկար նշանակալի տնտեսական անհավասարություն, սոցիալական շերտավորումը ստատուսային էր: Անհատի սոցիալական դիրքը որոշվում էր «պրեստիժային» ռեսուրսների վրա տիրապետությամբ, որոնք բաշխվում էին ըստ ցուցակների: Պրեստիժային ապրանքների կրում էին խորհրդանշական կապիտալի բնույթ, այստեղից մտավորականության բարձր դիրքը Խորհրդային Միությունում: Նմանօրինակ պրեստիժային խորհրդանշական ապրանք էր հանդիսանում «արևմտյանի» կնիքը կրող նյութական և խորհրդանշական ապրանքների՝ ջինսեր, ամերկյան կինոնկարներ, մագնիտաֆոն, պոռնոգրաֆիա, նաև «ավանգարդը», որը ուշխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանում ներկայացված էր վերացական արվեստով և պոպ-արտով: Այն իր գուգահեռներն ուներ քաղաքային լանդշաֆտում. «կոմունիստական-կապիտալիստական կոնվերգենցիայի» ռճի էպիզոդիկ շինություններ՝ Երիտասարդության պալատը, «Ռոսիա» կինոթատրոնը, «Դվին» հյուրանոցը և այլն: Այն ակնառու մատնանշում էր մեկ այլ քաղաքական տարբերություն՝ «տեղականի» և «այնտեղի»:

Բայց «կոնվերգենցիոն» օբյեկտներից ամենաուշագրավը սրճարաններն էին: Խորհրդային Երևանի կենտրոնը 80-ականների սկզբին կախն բազմաթիվ սրճարաններ, ընդմիջված հասարակական այգիներով: Այդ հանրային տեղերում հավաքվածները հիմնականում մտավորականներ էին, գրողներ, նկարիչներ: Նրանք

քննարկում և հղկում էին այն բանաձևերը, որոնք «գլաստնոստի» տարիներին և հետո դարձան քաղաքական գործողության լոզունգներ: Նրանք վերոհիշյալ երկու տարբերություններն էին՝ «ազգայնական» և «ազատական»: Մեկի առանցքում Լեոնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքն էր, մյուսի նպատակը՝ մասնավոր սեփականության և շուկայական տնտեսության ձևավորումը:

Երկրորդի իրագործման ձևերից մեկն էլ ընդհատակից դուրս եկած ժամանակակից արվեստն էր, որը դարձավ հետխորհրդային Հայաստանում արևմտյան գիտելիքի կրողներից մեկը: Խնդիրը այն չէ, որ արվեստագետների ներկայացրած արվեստը սկզբնավորվել էր Արևմուտքում և զարգանում էր Արևմտյան աջակցությամբ և նույնիսկ նկարագրելով տեղական փորձառությունը ծագում էր արևմտյան կոնցեպտներից: Ավելի կարևոր է Արևմուտքի, որպես իշխանության լոկուսի դերը, առանց որի անհնար էր արվեստի դաշտի այն վերակառուցումը, ինչը հնարավոր է դարձնում և արտահայտչամիջոցը և ձևը: Եթե 60-ականներին ձևավորված «խորհրդային մոդեռնիզմը» իր լեգիտիմությունը գտնում էր ազգայինում, որպես իշխանության լոկուսի, ապա նրա հետ սուր կոնֆլիկտի մեջ մտած «հայկական ավանգարդը»՝ արևմտյան գիտելիք-իշխանությունում, առանց որի անհնարին կլինեին նրա ստեղծած նկարները, ինստալիացիաները կամ վիդեոարտերը: Մյուս կողմից հայկական արվեստի, այդ թվում ժամանակակից արվեստի զարգացման համար առանցքային էր սեփականության վերաբաշխման հարցը: Մասնավորապես կարելի է հիշել «Հայ-արտի» շենքի դեպքը, որը սկզբում «նվիրվեց» Լևոն Տեր Պետրոսյանի լիբերալ ռեժիմի կողմից «ավանգարդիստներին», ապա ետ վերցվեց Ռ. Քոչարյանի «ազգայնական» ռեժիմի կողմից:

Հայկական ժամանակակից արվեստը կապված էր և կապված է հայկական ընտրախավի այն հատվածի հետ, որը քարոզում է «ժողովրդավարություն», «մարդու իրավունքներ», «շուկա» և «տնտեսական լիբերալիզմ», ակամա հանդիսանալով միջազգային կապիտալի տարածման խողովակներից մեկը:

Հարկ է նշել, որ դասակարգային շերտավորումը և կապիտալիստների դասակարգի ձևավորումը ավարտվեց Ռ. Քոչարյանի իշխանության օրոք և շնորհիվ: Հայաստանյան կապիտալիզմի ձևավորման ընթացքը բնորոշ է երրորդ աշխարհի երկրներից շատերին: Ինսայդերական /ներքին ոչ-ձևական/ արտոնությունների շնորհիվ ձևավորվեցին «շահերի խմբեր», որոնք ձևավորեցին մի համակարգ, որը խիստ տարբերվում էր եվրոպական մոդելից:

Ժան-Ֆրանսուա Շեվրիյեն գրում է. «Արևմտյան՝ եվրոպական մոդելի գերիշխանությունը թուլանում է, երբ կապիտալիստական զարգացման որոշակի նորման զատվում է սոցիոքաղաքական կարգավորման սկզբունքներից: Մարքսը ծանոթ էր կապիտալիզմին և ազգային պետությանը, բայց «ձեռնարկատերերի պետությունը»- «Etat entrepreneurial»: Մենք այսօր ծանոթ ենք պետության այդ նոր ձևին, հաճախ գործող հակադեմոկրատական և մինչ-դեմոկրատական կառավարումով, որը ակնհայտորեն, ընդունվում և կենսագործվում են բնակչության համաձայնությամբ»/ Глобализация / Цивилизация. Беседуют Этьен Балибар, Жан-Франсуа Шеврье, Катрин Давид и Надя Тази// Политика, философия, искусство. № 1, 2003/: Հայաստանյան «ձեռնարկատիրական պետության» ձևավորմանը հատկապես նպաստեց, այն որ համաշխարհային ֆինանսական կազմակերպությունների պահանջով մինչ այսօր կառավարությունը խստորեն հետևում է «Վաշինգտոնյան կոնսենսուսի» սկզբունքներին:

Տնտեսությունը այսպիսի պայմաններում կարող է զարգանալ, դանդաղորեն աճում է նաև կենսամկարդակը, սակայն այդպիսի զարգացումը ի վերջո բերում է հեղափոխական տրամադրությունների աճին:

Երևանի կապիտալիստական վերակառուցման խորհրդանշական ավարտ պետք է համարել Երևանի պատմական կենտրոնի ավերումը, բնակիչների բռնի վտարումը և նրա տեղում Հյուսիսային պողոտայի կառուցումը: Ինչպես գրում է Մայկ Դևիսը. «Հողօգտագործման բևեռացված մոդելը և բնակչության խտությունը հիշեցնում են կայսերական հսկողության և ռասայական տիրապետության հին տրամաբանությունը: Ամենուր երրորդ աշխարհում հետզհետեային էլիտաները ժառանգել և նախանձախնդիր վերարտադրում են առանձնացված գաղութային քաղաքի ֆիզիկական առանձնահատկությունները: Չնայած ազգային ազատագրության և սոցիալական հավասարության հռետորության, նրանք ակտիվորեն հարմարեցնում էին գաղութային գոտիացումը հանուն իրենց դասակարգային արտոնությունների և տարածական առանձնացման»: <http://world-information.org/wio/readme/992003309/1154965269/>: Ժամանակագրական առումով վճռական էր 2001 թ.-ին քաղաքապատկան հողերի աճուրդով վաճառքի թույլտվությունը: Մինչ այդ հնարավոր էր միայն վարձակալությունը: Մյուս կարևոր ազդակը գալիս էր քաղաքը օտարերկրյա տուրիստների համար գրավիչ դարձնելու ցանկությունից, փաստորեն շքեղության գոտի ձևավորելու նպատակ ունենալ:

Հյուսիսային պողոտայի կառուցումը ըստ էության հանդիսանում էր Երևանի կապիտալիստական վերակառուցման հայտ: Ուշագրավ է նաև բազմաթիվ ավտոմոբիլային թունելների կառուցումը, բայց հատկապես քաղաքի կենտրոնով հոսող Գետառի հունի ասֆալտապատումը, ուղղորդելով գետը ստորգետնյա ջրանցքով: Այս վերջինների խորհրդանշական իմաստը բացահայտ է. գետի սանձումը հարկ է դիտարկել որպես դասակարգային իշխանության կողմից խորհրդանշական բռնության դրսևորման ևս մեկ արտահայտություն: Ինչպես 1860-ականների Փարիզում, բարոն Հոսմանի մոլեռանդ իշխանության ժամանակ, այնպես էլ 2000-ականների Երևանում քաղաքային վերակառուցումը ուղղված է մասնավոր շահույթի մաքսիմալացմանը և սոցիալական հսկողության մեծացմանը: Բայց ի տարբերություն հոսմանական Փարիզի Երևանի քոչարյանականացումը իրագործվում է կենտրոնում, բարձր խավը, որը մինչ այդ առանձնատներ էր կառուցում ծայրամասում, քաղաքական իշխանության հաստատություններին տարածականորեն մերձեցնելու համար:

Արդյունքում հայաստանյան բուրժուան, ինչպես երրորդ աշխարհում համարյա ամենուր, ինչպես նշում է, Ջ. Սեաբրոկը, «դադարում են լինել իրենց երկրի քաղաքացիները և դառնում են քոչվորներ, որոնք պատկանում են փողի ապատարածական տոպոգրաֆիային: Նրանք դառնում են հարստության հայրենասերները, Ոչմիտեղի խաբկանքային և ոսկեզոծ ազգայնականները»: / Jeremy Seabrock, In the Cities of the South: Scenes from a Developing World, London 1996, p.. 211/

Հյուսիսային պողոտան հարկ է դիտարկել որպես creatio ex nihilo՝ ոչնչից ինչ-որ բան ստեղծելու դեպք: Պողոտայի արհեստականությունը ավելի է ընդգծվում պողոտայում կանաչ տարածքների բացկայությամբ՝ միայն թփեր թաղարների մեջ: Ըստ էության այն պետք է դառնա հայաստանյան բռնապետի՝ Ռ. Քոչարյանի մեծության ապացույցը. ոչնչից ինչ ստեղծելու նրա մոգական ընդունակության վկայությունը:

Համաձայն Ռ. Քոչարյանի կողմից բարձրաձայնված տեսակետի, Հյուսիսային պողոտան պետք է «գեղեցկացնի» Երևանը, ավելի շատ տուրիստներ գրավելու համար, այսինքն հանդիսանում է նաև գլոբալացման խորհրդանիշ:

Երևանի կապիտալիստական վերակառուցումը նշանակում էր նաև քաղաքական իշխող ընտրախավի վերակառուցում, որը այժմ բաղկացած է բացառապես խոշոր բիզնեսմեններից՝ «օլիգարխներից» և պետական նոմենկլատուրայից, վերջինները իրենց ձեռքում կենտրոնացրել են նաև հայկայական տնեսական իշխանություն:

Վերակառուցվեց նաև մշակութային դաշտը: Եթե մեկ տասնամյակ առաջ Հայաստանը հանդիսանում էր շոու-բիզնես ներմուծող երկիր, հիմնականում նախկին կայսերական կենտրոն Ռուսաստանից և հայկական սփյուռքից, ապա այժմ այն ոչ միայն փոխարինված է տեղական արտադրությամբ, այլ նաև «արտահանվում» է: Շոու-բիզնեսը քաղաքականապես ենթարկված է իշխանություններին և գաղափարական հենարանն է, ըստ էության դառնալով ամբողջատիրական «սոցռեալիզմի» կապիտալիստական տարբերակը, նրա պաշտոնական արվեստը: Քաղաքային տարածքի շահագործման համար այնուհետև այն հետևանքը, որ ավելի մեծացրեց զանգվածային միջոցառումների՝ հանդիսությունների, տոների, բացօթյա համերգների անցկացման իշխանական հնարավորությունները: Շոու-բիզնեսի «աստղերի» դիմանկարները մեծ քանակությամբ հայտնվեցին բաններային գովազդի վրա, կարծես հսկելով քաղաքային կյանքի դրսևորումները:

Մշակույթի կապիտալիստական վերակառուցումը հանգեցրեց «հանդիսանքի հասարակության» ձևավորմանը: Բայց այն տարբերվում է արևմտյան հանդիսանքի հասարակությունում հանդիսանքային «ապրանքների» բնույթով: Հայաստանում իշխանությունները շոու բիզնեսի միջոցով հրամցնում է ոչ թե «ազատություն» կամ «ժողովրդավարություն», ինչպես Արևմտյան երկրներում, այլ՝ «բարգավաճում», «պետություն», «ազգ», «ցեղասպանություն» և այլ հանդիսանքային «ապրանքներ»: Այս վերակառուցումները զգալիորեն թուլացրեցին «հին» ընդհանուր դիրքերը, որը 2007 թ.-ի խորհրդարանական ընտրություններում ջախջախիչ պարտություն կրեց: Կարծում եմ, որ հիմնական պատճառը այն էր, որ իշխանությունները և ընդհանուր ըստ էության օգտվում են նույն հանդիսանքային ապրանքներից, վերածվելով ավտորիտարիզմը հավերժացնող փոխլրացնող գործոնի:

«Հին» ընդհանուր քննադատությամբ հանդես եկավ «Իմպիչմենթ» բլոկը, որը հիմնականում բաղկացած էր երիտասարդներից: Նրանց գործողությունները կրում էին կառնավալային բնույթ և ազդված էին ակցիոնիստական արվեստից: Նրանց քաղաքական հիմնական լոզունգն էր՝ «Ո՛չ ռոբոտացմանը, ո՛չ սերժանտացմանը, ոչ դոդացմանը», որը բառախաղ էր նախագահ Ռոբերտ Քոչարյանի, վարչապետ, այժմ՝ նախագահ, Սերժ Սարգսյանի և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ, քրեական համբավ ունեցող օլիգարխ «Դոդ» մականունով Գազիկ Ծառուկյանի անունների հետ: Նրանց նախընտրական պլակատներից մեկի վրա պատկերված էին այս երեք գործիչների դիմանկարները առնված ճանապարհային արգելող նշանի մեջ:

Առաջին անգամ հայաստանյան իրականությունում «Իմպիչմենթը» բերեց նոր սկզբունք. քաղաքական պրոցեսից հաճույք պետք է ստանան բոլորը: Եթե «հին» ընդհանուր կազմակերպչական սկզբունքը էլիտարիստական էր, ապա այս նոր քաղաքական շարժման լոզունգն էր «1+1+1+...»: Հայաստանյան հայտնի հրապարակախոս Հ. Տեր-Աբրահամյանը բնութագրելով նոր իրադրությունը գրում է. «Իրական քաղաքականությունը վերադառնում է փողոցներ և հրապարակներ:

Իշխանամետ և «ընդհանրապես» խեղկատակների թագավորությունում հանկարծակի հայտնվում է կենդանի խոսք ունեցող մի ուժ»/«Քաղաքականության վերադարձը» («Հայկական ժամանակ», #92, 2007 թ.): Այս քաղվածքում հատկապես հարկավոր է ուշադրություն դարձնել տարածական բնութագրումների վրա: Ինչպես գրում է Սասկիա Սասենը. «Քաղաքի տարածությունը շատ ավելի կոնկրետ է, քան ազգային քաղաքական տարածությունը: Այստեղ ոչ-ձևական քաղաքական ակտորները, ովքեր անտեսանելի են ազգային քաղաքականության համար, ավելի մերձ են քաղաքական բեմին Եվ, հնարավոր է, ավելի կարևոր է, նրանք կազմել քաղաքական ակտորներ: Ինքնին այն փաստը, որ նոր զարգացած քաղաքական տնտեսությունը ստեղծում է նշանակալի ընդարձակված շքեղության գոտի, որը տեղափոխում է տները և ձեռնարկությունները, դառնում է այն գործոնը, որը կերակրում է քաղաքականությունը: Քաղաքային տարածությունը այլևս քաղաքացիական չէ, որին ձգտում էին հին տեղական կառավարող էլիտաները, այլ քաղաքական: Քաղաքային քաղաքականության հիմնական մասը կոնկրետ է, ավելի գրված մարդկանց կողմից, քան կախված զանգվածեղ մեդիա տեխնոլոգիաներից: Փողոցային քաղաքականությունը հնարավոր է դարձնում նոր քաղաքական սուբյեկտիվությունը, որը այլևս կախված չէ հին քաղաքական ձևական համակարգերից»: <http://world-information.org/wio/readme/992003309/1154964804/>

Նույն 2007 թ-ին իր գործունեությունը սկսեց «Սկսել ա» երիտասարդական նախաձեռնությունը: Նրանք հասարակական վայրերում անցակցրեցին մի շարք ակցիաներ, հիմնականում կրող կառնավալային բնույթ: Այս շարժումը քաղաքական նոր սուբյեկտի օրինակ է: Շարժման անդամ Ա. Խառատյանը բնութագրելով այս նախաձեռնությունը, պարզաբանում է. «Երբ այս շարժումը սկսի ֆորմալանալ, ինքը որպես այդպիսին սահմանափակելու է իր հնարավորությունները, վերածվելու է մի արհեստական հ/կ-ի, որոնցից մենք շատ ունենք: Մենք կարևորում ենք կազմակերպված քառս լինելը, այսինքն խոսել այն գաղափարների դաշտից, որին հավատում ենք»: /«Սկսել աե-ն անակնկալ կմատուցի պատգամավորներին» / Ապրիլի 23, 2008/ [www.aravot.am/](http://www.aravot.am/):

2007 թ. ի աշնանը քաղաքական գործունեության վերադարձավ հանրապետության առաջին նախագահ Լ. Տեր Պետրոսյանը, մասնակցելու համար 2008 թ.-ի փետրվարի 19-ի նախագահական ընտրություններին: Հիմնականում նա փորձում էր հենվել հենց այդպիսի նոր քաղաքական սուբյեկտների վրա: Դա հատկապես խթանեց երիտասարդական նախաձեռնությունների ակտիվացմանը, որոնք տարաբնույթ ակցիաներ են անցկացնում քաղաքային տարածության առանցքային տեղերում: Առանձնապես հարկավոր է նշել «Հիմա» երիտասարդական նախաձեռնությունը / <http://qbhima.blogspot.com/>, «Հատուկ գունդ» երիտասարդական նախաձեռնությունը / <http://hatukgund.do.am/>, «Վեր կաց» քաղաքացիական հոսանքը / <http://verkats.com/>, «Մի խումբ ուսանողներ» երիտասարդական շարժումը, «Երիտասարդ պահպանողականներ» ՀԿ, «Արտ Լաբարատորիա» մշակութային կազմակերպությունը և այլն: Մյուս կարևոր առանձնահատկությունն է, որ այդ ընդհանրապես շարժումը մերժողական էր տրամադրված իշխանությունների կողմից վերահսկվող զանգվածային էլեկտրոնային լրատվամիջոցների հանդեպ և ստիպված էր կիրառել նոր դիջիթալ տեխնոլոգիաներ, որը հիմք հանդիսացավ այն նաև անվանել DVD հեղափոխություն\*: Ընդհանուր առմամբ պատրաստվեց և տարածվեց մոտ մեկ միլիոն DVD-ի, որի մի զգալի մասը արված էր վիդեոարտի ժանրում: Կազմակերպչական կարևոր ռեսուրս էր հանդիսանում նաև ինտերնետի ընձեռած

հնարավորությունը: Օրինակ. վերոհիշյալ խմբերից շատերը նախապես ձևավորվել են վիրտուալ տարածությունում, ինչպես օրինակ «Վեր կաց» քաղաքացիական հոսանքը: Այդ ամենը հիմք տվեց քննադատներից ոմանց խոսելու Հայաստանում պոստմոդեռնիզմի ավարտի մասին:

Շարժման առաջին փուլը ավարտվեց մարտի մեկի արյունալի ողբերգությամբ, երբ իշխանությունները ընդհանուր առմամբ խաղաղ հանրահավաքի նկատմամբ կիրառեցին զենք և սպանեցին ամենաքիչը 10 մարդու: Երկրում սահմանափակվեցին ցույցերի, հանրահավաքների, խոսքի և այլ ազատություններ: 100- ավոր ակտիվիստներ հայտնվեցին բանտերում: Արտակարգ դրության ձևական վերացումից հետո ևս իշխանությունները չեն արտոնում հանրահավաքները, ցույցերը և երթերը: Սակայն ակցիոնիստական խմբերը ավելի ինտեսիֆիկացրին իրենց գործունեությունը, չնայած ոստիկանությունը նրանց նկատմամբ կիրառում անօրինական բռնության բոլոր ձևերը: Ակտիվիստները տուժում են նաև իշխանությունների աջակցությունը վայելող ֆաշիստամետ խմբերի գործունեությունից՝ ՄԻԱԿ, Հայաստանի երիտասարդական կուսակցություն, «Մեկ ազգ», «Համերաշխություն», «Միասին», «Բազե» և այլ:

Ակցիոնիստական գործունեության հիմնական տեղը հանդիսանում է Հյուսիսային պողոտան: Ուշագրավ է «Քաղաքականացված զբոսանքներ», երբ ընդհիմադիր տարբեր խմբեր զբոսնում են այդ պողոտայով, ինչը առաջացնում է ոչ միայն ոստիկանության հակազդեցությունը, այլ նաև կորպորացիաների անվտանգության ծառայությունների դժգոհությունը:

Երևանի կապիտալիստական վերակառուցումը խորհրդանշում է՝ ուրբանիստական տարածության հատվածայնացում: Քաղաքական նոր սուբյեկտների պայքարը դա նախնառաջ պայքար է հանրային տարածությունների համար:

\*«DVD հեղափոխություն» արտահայտությունը առաջին անգամ հնչեցվեց ընդդիմադիր առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթներում՝ 2008 թվականին Երևանում՝ նախագահական ընտրությունների նախաշեմին տեղի ունեցած հանրահավաքների ընթացքում: Ըստ Տեր-Պետրոսյանի՝ նա այդ արտահայտությունը լսել էր ցուցարարների խոսակցություններից: Ակտիվիստների խմբերը թողարկում և տարածում էին DVD -ներ, որոնք պարունակում էին տեղեկատվություն հանրահավաքների, ակտիվիստների ակցիաների և ընդդիմադիր առաջնորդի արտասանած ելույթների վերաբերյալ, ինչպես նաև՝ իրատեսական դոկումենտալ տեսանյութեր՝ մարտի 1-ին՝ ոստիկանության հետ տեղի ունեցած բախումների և հատուկ ուժի կիրառման մասին: DVD ֆորմատի կիրառումը հնարավոր դարձրեց այդ նյութերի լայն շրջանառությունը, այն դեպքում, երբ դրանք չէր կարելի տեսնել խիստ գրաքննության ենթարկվող հեռուստատալիքներով, իսկ ինտերնետը հասանելի չէր լայն հասարակության համար:

DVD ՀԵՂԱՓՈՒՄԻԹՅԱՆ մանիֆեստը <[http://www.red-thread.org/dosyalar/DVD\\_RevolutionARM.pdf](http://www.red-thread.org/dosyalar/DVD_RevolutionARM.pdf)>, որը գրվել է այդ ժամանակ՝ վեց արվեստագետների կողմից / Տիգրան Խաչատրյան, Յուրի Մանվելյան, Արման Գրիգորյան, Կարեն Ալեքյան, Կարեն Բարսեղյան, Արման Մարտիրոսյան/ արտացոլում է հեղափոխական ընթացքը Հայաստանում և առաջարկում արտիստական այլընտրանքային «Հեղափոխական ծրագիր»: